

# ԽՆԴԻՐՆԵՐ


Խնդիրների լուծման համար տրվում է 75 րոպե

3-4-րդ դասարաններ

- հաշվիչ օգտագործել չի թույլատրվում.
- յուրաքանչյուր խնդրի համար տրված պատասխաններից ճիշտ է միայն մեկը.
- չլուծված խնդրի համար միավորներ չեն գումարվում և չեն հանվում.
- մրցույթի մասնակիցը կարող է վաստակել առավելագույնը 96 միավոր.
- մրցույթի ավարտին խնդիրների թերթիկը մնում է մասնակցի մոտ.
- գլխավոր պահանջը մրցույթի մասնակիցներից և կազմակերպիչներից հանձնարարությունը ինքնուրույն և ազնիվ կատարելն է:

## 3 միավոր գնահատվող խնդիրներ


1. Նկարներից որո՞ւմ է սև կենդուրուների քանակն ավելի շատ, քան սպիտակներինը:



2. Սոնան գրեց ճիշտ գումարման գործողություն, հետո երկու միանման թվանշանները փակեց թղթով: Ո՞ր թվանշանն է փակված թղթով:  $4\blacksquare + 5\blacksquare = 104$


- (A) 4 (B) 5 (C) 7 (D) 8 (E) 9

3. Ինչպե՞ս է շարունակվում շրջանների շարքը:



4. Քանի՞ եռանկյունի կա նկարում:

- (A) 9 (B) 10 (C) 11 (D) 13 (E) 12



5. 2012թ. Լոնդոնի օլիմպիադայում ԱՄՆ-ը վաստակեց 46 ոսկե, 29 արծաթե և 29 բրոնզե մեդալ: Չինաստանը վաստակեց 38 ոսկե, 27 արծաթե և 23 բրոնզե մեդալ: ԱՄՆ-ի հավաքականը Չինաստանի հավաքականից քանի՞ մեդալով ավել վաստակեց:

- (A) 6 (B) 14 (C) 16 (D) 24 (E) 26

6. Լևոնն ուներ 36 կոնֆետ: Նա դրանք հավասարապես բաժանեց իր ընկերներին: Բերված թվերից ո՞րը հաստատ չի կարող հավասար լինել Լևոնի ընկերների քանակին:

- (A) 2 (B) 3 (C) 4 (D) 5 (E) 6

7. Լիլիթի մայրիկը պատրաստում է սենդվիչներ, որոնցից յուրաքանչյուրը կազմված է հացի երկու շերտից: Հացի մեկ փաթեթում կա 24 շերտ: Քանի՞ սենդվիչ կարող է նա պատրաստել երկուսուկես փաթեթից:


- (A) 24 (B) 30 (C) 48 (D) 34 (E) 26

8. Հինգ տղա կարծիք հայտնեց 325 թվի մասին: Արթուր. «Այն եռանիշ թիվ է»: Բագրատ. «Բոլոր թվանշանները տարբեր են»: Գագիկ. «Թվանշանների գումարը հավասար է 10-ի»: Դավիթ. «Միավորների կարգում գտնվում է 5 թիվը»: Երվանդ. «Բոլոր թվանշանները կենտ են»: Տղաներից ո՞վ էր սխալ:

- (A) Արթուր (B) Բագրատ (C) Գագիկ (D) Դավիթ (E) Երվանդ

## 4 միավոր գնահատվող խնդիրներ

9. Ուղղանկյուն հայելին կտորվեց: Բերված կտորներից ո՞րն է պակասում կտորված հայելու պատկերում:





10. Երբ Բուրատինոն ստում է, նրա քիթը երկարում է 6 սմ-ով, իսկ երբ նա ճիշտ է խոսում, քիթը կարճանում է 2սմ-ով: Նրա քիթը 9 սմ էր, ինչից հետո նա երեք անգամ ստեց և երկու անգամ ճիշտ խոսեց: Որքա՞ն դարձավ Բուրատինոյի քիթ երկարությունը դրանից հետո:

- (A) 31 սմ (B) 23 սմ (C) 19 սմ (D) 15 սմ (E) 14 սմ

11. Նարինջը խանութում վաճառվում է երեք տեսակի տուփերով, որոնք պարունակում են 5, 9 կամ 10-ական հատ նարինջ: Պետրոսն ուզում է գնել ճիշտ 48 հատ նարինջ: Ամենաքիչը քանի՞ տուփ պետք է նա գնի:

- (A) 8 (B) 7 (C) 6 (D) 5 (E) 4

12. Արմինեն սկսեց քայլել սլաքի ուղղությամբ: Յուրաքանչյուր խաչմերուկում նա թեքվում էր մե՛կ աջ, մե՛կ ձախ: Նախ նա թեքվեց աջ, ապա՝ ձախ, հետո՝ նորից ձախ, ապա՝ աջ, այնուհետև՝ ձախ և վերջապես՝ նորից ձախ: Ինչի՞ն հասավ Արմինեն իր ճանապարհի վերջում:



13. Համադասարանցիներ Արամը, Լուսինեն, Գայանեն և Վարդանը ծնվել են նույն տարում: Նրանց ծննդյան օրերը փետրվարի 20-ին, ապրիլի 12-ին, մայիսի 12-ին և մայիսի 25-ին են, ըստ որում՝ ոչ անպայմանորեն նշված հաջորդականությամբ:


Լուսինեն և Արամը ծնվել են նույն ամսին, Արամը և Գայանեն՝ նույն օրը, սակայն տարբեր ամիսներին: Համադասարանցիներից ո՞վ է ամենամեծը:

(A) Արամը (B) Լուսինեն (C) Գայանեն (D) Վարդանը (E) Հնարավոր չէ որոշել:

14. 30 երեխա մասնակցեց Արկածների այգում կազմակերպված միջոցառումներին. նրանցից 15-ը մասնակցեց «Շարժվող կամուրջ» մրցույթին, իսկ 20-ը՝ ձուպանով ցած սահեց: Երեխաներից քանի՞սը մասնակցեց մրցույթներից երկուսում:

(A) 25 (B) 15 (C) 30 (D) 10 (E) 5

15. Բերված մարմիններից ո՞րը կարելի է համադրել նկար 1-ում տրված մարմնի հետ այնպես, որ ստացվի ուղղանկյուն:




16. 35 թիվը ունի այնպիսի հատկություն, որ այն բաժանվում է իր միավորների կարգում գրված թվանշանի վրա, այսինքն՝ 35-ը 5-ի բաժանելիս ստացվում է 7: 38 թիվը չունի այդ հատկությունը: 21-ից մեծ և 30-ից փոքր քանի՞ այնպիսի թիվ կա, որ ունի այդ հատկությունը:

(A) 1 (B) 2 (C) 3 (D) 4 (E) 5

**5 միավոր գնահատվող խնդիրներ**

17. Նկարում բերված եռանկյան կողմերը երկու հավասար մասի բաժանող կետերը միացնելով՝ ստանում ենք ավելի փոքր եռանկյունի: Նույն գործողությունը կատարում ենք ստացված փոքր եռանկյան հետ: Ստացված ամենափոքր եռանկյան պես քանի՞սը կտեղավորվի սկզբնական եռանկյան մեջ:



(A) 5 (B) 8 (C) 10 (D) 16 (E) 32

18. 2013-ի հունվարի մեկից հետո քանի՞ տարի պետք է անցնի՝ մինչև առաջին անգամ տեղի ունենա հետևյալը. տարվա զրատման թվանշանների արտադրյալն ավելի մեծ է, քան դրանց գումարը:

(A) 87 (B) 98 (C) 101 (D) 102 (E) 103

19. Դեկտեմբեր ամսին Թավիշ կատուն քնեց ճիշտ 3 շաբաթ: Քանի՞ ընդամենը նա քնած չէր այդ ամիս:

(A)  $(31-7) \cdot 3 + 24 \cdot 60$  (B)  $(31-7 \cdot 3) \cdot 24 \cdot 60 + 60$  (C)  $(30-7 \cdot 3) \cdot 24 \cdot 60$   
(D)  $(31-7) \cdot 24 \cdot 60$  (E)  $(31-7 \cdot 3) \cdot 24 \cdot 60$

20. Բարսեղն ունի դոմինոյի խաղաքարեր, որոնք ցույց են տրված նկարում: Նա ուզում է դասավորել դրանք՝ ըստ դոմինոյի կանոնների. ցանկացած կողք-կողքի դրված խաղաքարերի հպվող քառակուսիների վրայի կետերի թիվը պետք է նույնը լինի: Ամենաշատը քանի՞ խաղաքար նա կարող է դասավորել այս ձևով:




(A) 3 (B) 4 (C) 5 (D) 6 (E) 7

21. Գուրգենը պետք է վաճառի 10 ապակե զանգակ, որոնցից յուրաքանչյուրի գինը 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9 կամ 10 եվրո է: Քանի՞ եղանակով նա կարող է բոլոր զանգակները բաժանել երեք խմբաքանակի, որպեսզի դրանց գները նույնը լինեն:

(A) 1 (B) 2 (C) 3 (D) 4 (E) Աման ձևով բաժանելն անհնար է:

22. Պետրոսը գնել է գորգ, որի լայնությունը 36 դմ է, երկարությունը՝ 60 դմ: Գորգի նախըր կազմված է փոքր քառակուսիներից, որոնցից մի մասի վրա պատկերված է շրջան, մյուսների վրա՝ եռանկյունի: Նկարից երևում է, որ լայնության վրա տեղավորվում է 9 քառակուսի: Քանի՞ եռանկյունի կա լրիվ բացված գորգի վրա:




(A) 68 (B) 67 (C) 65 (D) 63 (E) 60

23. Փոքրիկ Ռոնն գրեց մի քանի թիվ՝ օգտագործելով միայն 0 և 1 թվանշանները: Այդ թվերի գումարը 2013 է: Պարզվեց, որ հնարավոր չէ ստանալ այդ գումարը գումարելիների ավելի փոքր քանակով: Քանի՞ թիվ էր գրել փոքրիկ Ռոնն:

(A) 2 (B) 3 (C) 4 (D) 5 (E) 204

24. Մարինեն ունի նկարում պատկերված մոխրագույն մարմինների մեծ քանակություն: Ամենաքիչը քանի՞ այդպիսի մարմին կպահանջվի մոխրագույն քառակուսի կառուցելու համար:



(A) 3 (B) 4 (C) 6 (D) 8 (E) 16